



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 16-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՛

Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2021 ապրիլի 9-ի թիվ 3 հերթական նիստի ՕՐԱԿԱՐԳԸ՝


1. Բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը:
2. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի N 45-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի N 42-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 82-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
5. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի N 43-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:
6. Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի և գույքի աճուրդների կազմակերպման ու իրականացման կանոնակարգը հաստատելու մասին:
7. Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու և կանոնակարգը հաստատելու մասին:
8. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Լեռնանիստ համայնքի գլխավոր հատակագծի մշակում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
3. ԶՈՂՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ
6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱԴԵՏՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 17-Ա

**ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի հաղորդումը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ
6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ապրիլի 2021 թվականի N 18-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի «Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 45-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

- 1) 11.1.2.51 /պահուստային ֆոնդ/ ծրագրի 4891 /պահուստային միջոցներ / հոդվածի «4224,6» թիվը փոխարինել «3014,6» թվով
- 2) 04.5.1.51 /ճանապարհային տնտեսություն/ ծրագրի 4251 /շենք և շինությունների ընթացիկ նորոգում / հոդվածի «640,0» թիվը փոխարինել «1850,0» թվով
- 3) 04.5.1.51 /ճանապարհային տնտեսություն/ ծրագրի 5113 /շենք և շինությունների կապիտալ նորոգում / հոդվածի «4108,4» թիվը փոխարինել «3708,4» թվով
- 4) 04.5.1.51 /ճանապարհային տնտեսություն/ ծրագրի 5134 /սախագծահետազոտական ծախսեր/ հոդվածի «0» թիվը փոխարինել «400,0» թվով

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից;

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

3. ԶՈՒՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2021 թվականի N 19-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի  
N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

### Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի «Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի, «Լեռնանիստի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակազմի և «Լեռնանիստ բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 42-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

3. ԶՈՒՆՔՅԱՆ ՔԵՐՈՔ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ







Կրթության մարզի Լեռնահատի մանկապարտեզի համայնքի ավագանու  
 2020 թվականի դեկտեմբերի 4-ի N 42-Ա որոշման փոփ. 2021  
 թվականի փետրվարի 26-ի N 12-Ա որոշման փոփ. 2021 թվականի  
 ապրիլի 9-ի N 19-Վ որոշման փոփ. 2021 թվականի

**ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ**


Կրթության մարզի Լեռնահատի մանկապարտեզի /ՀՈԱԿ/ աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային  
 դրույքաչափերը 2021 թվականի համար

Հ/հ	Կազմակերպություն և անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագի րը	հաստիքայի և սխալորը	դրույքը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելվածա րը	Աշխատա վարձի չափը
1	2	3	4	5	6		7	8	9	10
1		տնօրեն	-	-	1	1	105,900			105,900
2		Գլխ. Հաշվապահ	-	-	1	0.5	99,150			49,575
3		գանձապահ	-	-	1	0.5	99,150			49,575
4		Գործավար	-	-	1	0.5	94,500			47,250
5		մեթոդիստ	-	-	1	1	91,500			91,500
6		դաստիարակ	-	-	2	2	99,150			198,300
7		դաստիարակ	-	-	4	2	99,150			198,300
8		դաստիարակի օգնական	-	-	2	2	91,500			183,000

9	դաստիարակի օգնական	-	-	2	2	2	96,000			192,000
10	դաստիարակ երաժիշտ	-	-	1	1	1	99,150			99,150
11	բուժքույր	-	-	1	1	1	96,000			96,000
12	խոհարար	-	-	1	1	1	96,000			96,000
13	խոհարարի օգնական	-	-	1	0.5	0.5	91,500			45,750
14	Տնտեսվար	-	-	1	0.75	0.75	99,150			74,363
15	Հավաքարար	-	-	1	1	1	91,500			45,750
16	դրնապան	-	-	1	1	1	91,500			91,500
17	պահակ	-	-	1	1	1	91,500			91,500
	Ընդամենը			23	18.25	18.25	1,632,300			1,755,413

ԼՆՌԱՆՈՒՄ ՆԱԽՅՈՒՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ապրիլի 2021 թվականի N 20-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի  
N 82-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2017-2021 թվականների ն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 82-Ն որոշման մեջ կատարել լրացում, որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

3. ԶՈՒՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ապրիլի 2021 թվականի N 21-Ա

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի  
N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՛**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի <<Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին>> N 43-Ա որոշման մեջ կատարել լրացում, որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
3. ԶՈՒՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ
6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝**

**ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 20201 թվականի N 22-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ  
ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի,  
«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի  
ղեկավարի առաջարկությունը՝

### Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի և գույքի աճուրդների կազմակերպման ու իրականացման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





#### Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### ԼԵՐՆԱՇՃԱՐԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոնակարգով կանոնակարգվում են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի և գույքի աճուրդների կազմակերպումն ու իրականացումը, որոնք բխում են ՀՀ Քաղաքացիական ու Հողային օրենսգրքերի և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի դրույթներից:
2. Աճուրդների կազմակերպիչը համայնքի ղեկավարն է, որն իր որոշմամբ ստեղծում է աճուրդային հանձնաժողով:
3. Հանձնաժողովն որոշումներ է ընդունում ծայրերի պարզ մեծամասնությամբ:
4. Հանձնաժողովը գլխավորում է Լեռնաշխարհ համայնքի ղեկավարը:
5. Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով, զանգվածային լրատվության այլ միջոցներով և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:
6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները.
  - 1) աճուրդի կայացման տարին, ամսաթիվը և ժամը.
  - 2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը).
  - 3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն).
  - 4) աճուրդի ձևը և անցկացման կարգը.
  - 5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, լոտի մեկնարկային գինը, նախավճարը և քայլի չափը.
  - 6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
    - ա) հայտ,
    - բ) աճուրդի մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր,
    - գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթեր (գրանցման վկայական, կանոնադրություն, ՀՎՀՀ),
  - 7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը.
  - 8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.
  - 9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.
  - 10) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լոտի վաճառքի հերթականությունը.
  - 11) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը: Աճուրդի կանոնակարգը տրամադրելու համար պահանջվում է միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը:
  - 12) սույն կանոնակարգով սահմանված հողատարածքների և գույքի ձեռք բերման և փաստաթղթերի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են մրցույթում հաղթող ճանաչված անձանց միջոցներով:
7. Հրապարակային ծանուցման փոփոխություն կատարվում է սույն կանոնակարգով, ինչ կարգով կատարվել է հրապարակային ծանուցումը:
8. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր և անձնագիր: Աճուրդի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը սույն օրենսգրքով սահմանված հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ չէ:
9. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք նախավճարը վճարում են տվյալ հողամասի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և նրանց տրվում է մասնակցի վկայական, ինչպես նաև աճուրդի մասնակցության վճար, որը տվյալ տարվա համար սահմանում է համայնքի ավագանին՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ որպես մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման

Աճուրդի դրված հողամասի քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և վարկողը կարող է գինն ավելացնել քայլի չափից ոչ պակաս գումարով:

**10.** Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Աճուրդն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, ինչպես նաև գրանցված անձինք և աճուրդի մասնակից չհամարվող անձինք: Գրանցված անձինք սահմանված կարգով վճարում են մուտքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, և աճուրդը սկսվելու պահից 30 րոպե առաջ աճուրդային հանձնաժողովի կողմից գրանցվել են: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդի գործընթացին մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

**11.** Աճուրդն սկսվելու պահից դադարեցվում է:

**12.** Աճուրդն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկ կամ ավելի է:

**13.** Աճուրդի կայացման ժամանակ պահպանվում է ծանուցման մեջ նշված լուտերի վաճառքի հերթականությունը:

**14.** Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:

**15.** Եթե աճուրդի մասնակցության համար հայտ չի ներկայացվել, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց կամ եթե լուտը չի վաճառվում, այդ թվում՝ ոչ մի գնորդ չներկայանալու դեպքում, ինչպես նաև եթե հաղթող ճանաչված անձը և (կամ) աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց, ապա տվյալ լուտի վերաբերյալ աճուրդը համարվում է չկայացած: Աճուրդը չկայացած համարվելու դեպքում հաջորդ աճուրդի պայմանները, այդ թվում՝ մեկնարկային գինը, կարող են փոփոխվել:

**16.** Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով: Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչվելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության: Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է նույն կարգով: Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լուտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման:

**17.** Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված փաստաթղթերը: Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լուտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը, նվազագույն հավելման չափով՝ մեկնարկային գնի 5%: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակիցը: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին: Լուտի (լուտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և տվյալ լուտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

**18.** Աճուրդն սկսվելու պահից երեսուն րոպե առաջ կազմակերպիչը հնարավորություն է ընձեռնում մասնակիցներին ծանոթանալու աճուրդի կանոնակարգին՝ մասնակիցների համար հասանելի տեղում կանոնակարգը փակցնելու միջոցով:

**19.** Առաջին անգամ աճուրդը չկայանալու դեպքում երկրորդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է նույն կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի, որն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակայնությունը: Յուրաքանչյուր սակարկության արդյունքով կազմվում է առանձին արձանագրություն, որն իր մեջ ներառում է տվյալներ՝ աճուրդի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, սակարկման ընթացքի և արդյունքների մասին:

**20.** Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

**21.** Աճուրդի արձանագրությունն ստորագրում են աճուրդային հանձնաժողովի անդամները, աճուրդում հաղթող ճանաչված անձը, ցանկության դեպքում՝ աճուրդի մյուս մասնակիցները: Արձանագրությունը և աճուրդի փաստաթղթերի փաթեթը պահպանում է Լեռնանիստի համայնքապետարանը:

Աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են՝

1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը:



- 2) լուսի անվանումը, լուսի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ, ինչպես նաև լուսի վիճակը.
- 3) լուսի մեկնարկային գինը.
- 4) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և գտնվելու վայրը.
- 5) հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 6) լուսի գնման գինը.

Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

Ընդհանուր աճուրդի դեպքում արձանագրությունը կարող է կազմվել սակարկությունների ընթացքում: Լուսն աճուրդում վաճառելուց հետո տվյալ լուսի նկատմամբ հաղթող ճանաչված մասնակիցը հրավիրվում է արձանագրությունն ստորագրելու:

22. Աճուրդում հաղթած և հողամասը գնելուց հրաժարված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում:


23. Աճուրդի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

24. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

25. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր: որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ապրիլի 2021 թվականի N 23-Ա

ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ  
ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով, Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝







**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով մրցութային կարգով տրամադրման կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ 
2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ 
3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՐ 
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ 
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ 
6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





Հավելված 1  
ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու  
2021 թ. ապրիլի 9-ի N 23-Ա որոշման

Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը  
վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրման  
մրցութային հանձնաժողովի կազմ

Հ/հ	Անուն ազգանուն	Պաշտոն	Հանձնաժողով անդրդավար
1	Արտյոմ Հայրապետյան	համայնքի ղեկավար	անդրդավար
2	Հովհաննես Մարգարյան	աշխատակազմի քարտուղար	արձանագրող
3	Արտակ Ադամյան	համայնքի ղեկավարի տեղակալ	անդամ
4	Գենարի Ավագյան	ավագանու անդամ	անդամ
5	Ռոման Մանուկյան	ավագանու անդամ	անդամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



### ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրման կանոնակարգը:
2. Սույն կանոնակարգով մշակված է Քաղաքացիական օրենսգրքի և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի, Հողային օրենսգրքի, պահանջներին համապատասխան:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցությամբ:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրման մասին համաձայնությունը տալիս է համայնքի ավագանին, սահմանելով մրցութային կարգով տրամադրվող հողամասերի վարձավճարի մեկնարկային գները և այլ էական պայմանները:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրման մրցության կազմակերպումն ու անցկացումը իրականացնում է համայնքի ավագանու որոշմամբ ստեղծված մրցութային հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով):

### ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

6. Մրցությունն անցկացվում են բաց, մրցութային կարող է մասնակցել ցանկացած անձ: Մրցությունը կազմակերպում և անցկացնում են մրցութային հանձնաժողովները: Մրցութային հանձնաժողովները սահմանում են մրցության պայմաններ, որոնք պետք է ներառեն՝

- 1) հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը:
- 2) հողամասի չափը և վարձակալության և (կամ) կառուցապատման ժամկետները:
- 3) հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը:
- 4) օգտագործման նպատակը, հաղորդակցությունների առկայությունը:
- 5) հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:
- 6) գյուղատնտեսական հողատեսքերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները:

7) բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները:

Մրցութային հանձնաժողովը կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ:

Մրցություն լավագույն պայմանները ճանաչելու և մրցության մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով համայնքի ղեկավարը սահմանում է մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:

7. Մրցություն անցկացնելուց մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ <http://www.azdarar.am>, ինչպես նաև համապատասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքերում հանձնաժողովը տեղեկատվություն է հրապարակում մրցության առարկայի, ձևի, անցկացման տեղի, ամսվա, օրվա, ժամի և հանձնաժողովի կողմից մշակված՝ մրցության պայմանների ու պահանջների, մրցության անցկացման կարգի, ներառյալ՝ մրցություն մասնակցության ձևակերպման, մրցություն հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցության առարկայի նախնական գնի մասին: Մրցության մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները:

- 1) մրցության կազմակերպչի անունը (անվանումը):
- 2) մրցության կայացման տարին, ամիսը, օրը և ժամը, ինչպես նաև վայրը:
- 3) մրցության հայտերի ընդունման ժամանակահատվածը:
- 4) մրցության ձևը, անցկացնելու կարգը և պայմանները:
- 5) մրցության լուտի նկարագրությունը:
- 6) մրցության մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:
- 7) մրցության հաղթողին որոշելու կարգը:



- 10) լուտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը:
  - 10) մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերը ամփոփելու նիստերի օրը և ժամը:
  - 11) մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը:
- Մրցույթի կանոնակարգը տրամադրելու համար կազմակերպիչը կարող է պահանջել միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը:
- Սույն կանոնակարգով սահմանված հողատարածքների վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով ձեռք բերման և փաստաթղթերի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են մրցույթում հաղթող ճանաչված անձանց միջոցներով:

**8.** Մրցույթի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել օրենքով սահմանված կարգով:

**ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**9.** Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի մասին ծանուցման մեջ սահմանված ժամկետում ներկայացնում են հայտ, մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագիր / իրավաբանական անձի դեպքում պետական ռեգիստրի վկայական, կանոնադրություն և մրցույթին մասնակցող անձի լիազորագիր:

**10.** Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար դրա անցկացման մասին ծանուցման մեջ նշված չափով մուծում են նախավճար, որի գումարը չի կարող գերազանցել մրցույթի առարկայի նախնական գնի 5 տոկոսը: Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը:

**11.** Նախավճարը կարող է վճարվել կանխիկ՝ մրցույթի կազմակերպչին:

**12.** Սահմանված հայտը լրացնելու և նախավճարը վճարելու դեպքում մրցույթի կազմակերպիչը պարտավոր է մասնակցին տրամադրել մասնակցի վկայական, որտեղ նշվում է մրցույթի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, մրցույթի անցկացման վայրը (հասցեն) ամսաթիվը:

**13.** Մրցույթի մասնակից չհամարվող անձանց համար կարող է սահմանվել մուտքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը:

**14.** Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ, իսկ մասնակիցներին մասնակցի վկայական տրամադրելը, ինչպես նաև մրցույթի մասնակից չհամարվող անձանց տոմսերի վաճառքը պետք է դադարի մրցույթի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ, եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

**15.** Մրցույթի մասնակցության հայտեր ներկայացնողների վերաբերյալ տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

**ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔԸ**

**16.** Նախքան մրցույթի սկսվելը կազմակերպիչը գրանցում է մրցույթի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր:

**17.** Մրցույթը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է մրցույթում տրամադրվող լուտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև մրցույթի անցկացման ձևը, այդ թվում գնային հայտեր ներկայացնելու կարգը:

**18.** Եթե մրցույթում բացի գնային հայտից առկա են նաև այլ պայմաններ, ապա մասնակիցը գնային հայտը և այլ էական պայմանները ներկայացնում է փակ ծրարով, որի մեջ պետք է նշվեն նաև կազմակերպչի կողմից առաջադրված այլ պայմանը ապահովելու մասին ծրագիր / քիզնես, ներդրումային/ ընդ որում փակ ծրարով նախապես ներկայացված հայտի մասնակիցը գրկվում է մրցույթի ընթացքում հայտում և իր կողմից առաջադրված պայմաններում փոփոխություններ կատարելու հնարավորությունից:

**19.** Տանկացած մասակից իրավունք ունի, նախքան մրցութավարի մուրճի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը ոչ պակաս նվազագույն հավելման չափով:

**20.** Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկված և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:

**21.** Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին:

**ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**22.** Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որն իր մեջ ներառում է տվյալներ մրցույթի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին:

**23.** Մրցույթում հաղթած անձն արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը: Նա գրկվում է նաև մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու կամ կառուցապատման իրավունքից: Եթե մրցույթի արձանագրությունն ստորագրելուց հրաժարվում է հանձնաժողովը, ապա կազմակերպիչը պարտավոր է մրցույթում հաղթած անձի նախավճարը վերադարձնել կրկնակի չափով:

- Եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:
25. Մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:
26. Մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի պաշտոնատար անձի և մրցույթում հաղթած անձի միջև կնքվում է հողի վարձակալության և (կամ) կառուցապատման պայմանագիր:
27. Վարձակալության և (կամ) կառուցապատման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
28. Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:


**ՄՐՅՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼԸ**

29. Մրցույթը չկայացած է համարվում, եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի հայտ չի ներկայացվել, ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին, ինչպես նաև եթե հայտեր ներկայացնելը չի համապատասխանել սույն կանոնակարգի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին և արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը: Այդ դեպքում մրցույթը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը:
30. Այդ դեպքում մրցույթը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը:
31. Մրցույթի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
32. Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, որոնց կրկնամրցույթն անց է կացվում 7 աշխատանքային օրվա ընթացքում:
33. Կրկնակի մրցույթի չկայանալու դեպքում հողամասը կարող է տրամադրվել առանց մրցույթի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**ԱՐՅՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ապրիլի 2021 թվականի N 24-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  
ԳՅՈՒՂՄՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ  
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող, 1.034389 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 16022021-07-0045, կադաստրային ծածկագիր՝ 07-033-0227-0015) մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրել 25 տարի ժամկետով և տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

3. ԶՈՒՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԱՐՏՅՈՒ ՎԱՅՐԱՊԵՏՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Լեռնանիստ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Լեռնանիստ համայնքի գլխավոր հատակագծի մշակում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին / հայտը կցվում է/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

3. ԶՈՒՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**Հ Ա Յ Տ**

**Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների**

Ծրագրի անվանումը	<i>Լեռնանիստ համայնքի գլխավոր հատակագծի մշակում</i>
Մարզ	<i>Կոտայք</i>
Համայնքը /համայնքները	<i>Լեռնանիստ</i>
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	<i>Մայրաքաղաքից 45 կմ Ք Շրազդանից 10 կմ</i>
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	<i>3177</i>
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	<i>Բարձր լեռնային</i>
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	<i>Ոչ /գլխավոր հատակագծի մշակումը ներկայացված է սույն սուբվենցիայի ծրագրով/</i>
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հատակ նշելով՝  - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,  - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,  - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների	<i>Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքը Շրազդանի տարածաշրջանի ամենամեծ գյուղական համայնքն է: Վարչական տարածքը կազմում է 4541 հա, ունի 620 տնտեսություն: Համայնքը 2019 թվականից հավակնել է դառնալ մարզի ակտիվ և այլբնութանքային տուրիզմի կենտրոն: 2020 թվականից սկսած համայնքում ներդրողների կողմից սկսվել են հյուրատների նախագծման և շինարարական աշխատանքներ:  Համայնքը դեռևս ապահովված չէ շուրջօրյա ջրամատակարարմամբ, 2019-2020թթ. -ին սուբվենցիոն ծրագրի ջրջանակներում իրականացվել է խորքային հորի հորատման, աշխատանքներ: Համայնքում բացակայում է ջրագծերի ցանցը:  Գազամատակարարման համակարգից օգտվում են արկա բնակչության 95%-ը:  Համայնքի ապահովված չէ ոռոգման համակարգով:</i>



<p><b>տոկոսը,</b></p> <p>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել է ներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ</p>	<p>Լուսավորության փողոցների տեսակարար կշիռն ընդհանուր փողոցների մեջ կազմում է 65%, լուսավորված փողոցների ընդհանուր երկարությունը 10 կմ է: Լուսավորության համակարգը բաղկացած է 304 լուսատուներից, որոնցից 102 էներգախնայող են /ԼԵԴ/:</p>
<p><b>Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը</b></p>	<p>Համայնքի գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակն է՝ համայնքում տարածական պլանավորման միջոցով բարենայաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը և որի արդյունքում պետք է կանոնակարգվեն՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- բնակավայրերի և դրանց սահմաններից դուրս գտնվող կառուցապատման ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունները, հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,</li> <li>- կառուցապատման հերթականությունը,</li> </ul> <p>հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը, առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները:</p>
<p><b>Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին</b></p>	<p>Տվյալ ծրագրի իրականացումն ունի երկարաժամկետ բնույթ, որն էլ իր ազդեցությունը կունենա համայնքի վարչական տանիքներում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունների, հող հատկացումների և այլ նմանատիպ գործընթացների ավելի հեշտ և կարճ ժամկետներում իրագործման համար:</p>
<p><b>Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գլխավոր հատակագծի մշակում</li> <li>2. Աշխատանքների կատարման մրցույթի հայտարարում</li> <li>3. Աշխատանքների իրականացում և վերահսկում</li> <li>4. Մշտադիտարկում</li> </ol> <p>Ծրագրի ավարտ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ավարտական ակտերի կազմում, քննարկում և հաստատում:</p> <p>Փաստաթուղթը մշակվում է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն</li> </ul>

	<p><i>որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (քնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի»,</i></p> <p><i>- ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի»,</i></p> <p><i>ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:</i></p>						
<p>Մրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի</p>							
<p>Մրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Մրագրի արդյունքում կունենանք Լեռնանիստ համայնքի գլխավոր հատակագիծ, որի արդյունքում կկանոնակարգվեն՝</li> <li>- բնակավայրերի և դրանց սահմաններից դուրս գտնվող կառուցապատման ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունները, հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,</li> <li>- կառուցապատման հերթականությունը,</li> <li>- հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը,</li> </ul> <p><i>տեղա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները:</i></p>						
<p>Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը</p>	<p><i>Մրագրի իրականացման ընթացքում կստեղծվի 1-2 ժամանակավոր աշխատատեղեր /հատակագծի մշակողներ/</i></p>						
<p>Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը</p>	<p><i>Նախորդ տարվա բյուջեն՝ 104 462 159 ՀՀ դրամ.</i></p> <table border="1" data-bbox="1212 1881 1575 2009"> <thead> <tr> <th>Պլանը</th> <th>Փաստացին</th> <th>Տոկոսը</th> </tr> </thead> <tbody> <tr> <td></td> <td></td> <td>ը</td> </tr> </tbody> </table> <p><i>Ընդամենը՝ համայնքի բյուջեի կատարողականը</i></p>	Պլանը	Փաստացին	Տոկոսը			ը
Պլանը	Փաստացին	Տոկոսը					
		ը					

Ընդամենը՝ համայնքի բյուջեի կատարողականը

Պլանը	Փաստացին	Տոկոսը
		ը

955989 104462159



այդրվում	00		
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից	793060 00	78815565	
- Սեփականեկամուտներ	235600 00	20201065	
- Ֆունդայինբյուջեիեկամուտներ	162920 00	676494	
Ընդամենը համայնքիբյուջեիծախսեր, որից	916190 00	104480714	
- Վարչականբյուջեիծախսեր	753270 00	69267420	
- Ֆունդայինբյուջեիծախսեր	162920 00	35213294	
Համայնքիֆունդայինբյուջեիփաստացիծախսերը, որից		35213294	
- ճանապարհաշինություն		22506794	
- ջրամատակարարում		11646000	
- փողոցայինկուսավորություն		0	
- գյուղատնտեսություն		0	
Կանույրի և սարքավորումների ձեռք բերում		1060500	

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	<b>93 907 000 ՀՀ դրամ.</b>		
		<b>Պլանը</b>	
Ընդամենը համայնքիբյուջեիեկամուտներիսղանալորում այդրվում		93907000	
- Վարչականբյուջեիեկամուտներ, որից		89098600	
- սեփականեկամուտներ		23560000	
- Ֆունդայինբյուջեիեկամուտներ / Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդ տեղափոխված ֆունդային բյուջե 4283062դր և ֆունդային բյուջեի տարեսկզբի մնացորդ 525338 դրամ/		4808400	
Ընդամենը համայնքիբյուջեիծախսեր, որից		89382400	
- Վարչականբյուջեիծախսեր		84574000	
- Ֆունդայինբյուջեիծախսեր		4808400	
Համայնքիֆունդայինբյուջեիսղանալորվածծախսերը, որից		4808400	
- Վարչական սարքավորումներ		700000	
- Համայնքի ճանապարհների հիմնանորոգում		4108400	

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը)	<p><b>Ընդհամենը համայնքի բյուջե 9390698422 դրամ, որից դրուացիա 6553830022դրամ,</b></p> <p><b>Ինքնակամ շինությունների օրինականացումից մուտքեր 200000022 դրամ</b></p> <p><b>Հողամասի կադաստրային արժեքի վճարումից մուտքեր 200000022 դրամ</b></p> <p><b>Անշարժ գույքի օտարումից մուտքեր 100000022 դրամ</b></p>
--	---

<p>հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով)</p>	
<p>Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,</li> <li>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ դրամ,</li> <li>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ դրամ,</li> <li>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ դրամ,</li> <li>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,</li> <li>- ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ</li> </ul>	<p>11 120 000 ՀՀ դրամ (100%),</p>
<p>Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը</p>	<p>5 004 000 ՀՀ դրամ (45%)</p>
<p>Այլ ներդրողներ</p>	

Ծրագրի իրականացման տևողությունը	<b>Սկիզբը օգոստոս 2021թ. Տևողությունը 4 ամիս</b>
Ծրագրի ծախսերը	<b>Գրք ներկայացվում է տեխնիկական բնութագիրը</b>
Ամսաթիվ	<b>09.03.2021թ.</b>

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):**

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Արտակ Աղամյան  
 Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը [lernanist1828@mail.ru](mailto:lernanist1828@mail.ru)

Ֆեռ. 094-80-79-58

Համայնքի ղեկավար



**Արտյոն Հայրապետյան**  
 (անունը, ազգանունը)

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՆԱՄԱՅՔՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՍՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

- Գլխավոր հատակագիծը մշակվում է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կազմով և բովանդակությամբ,
- Լեռնանիստ համայնքի համար ներկայացվում են հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները և նախագծի տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- Տեքստային մասերը ներկայացվում են A4 ֆորմատով, Arial Unicode տառատեսակով, տեքստի տառաչափերը՝ h=12 կամ h=10, աղյուսակները համապատասխանաբար՝ h=10, h=8, տողերի միջև հեռավորությունը 1.0 կամ 1.15: Բացատրագրի աղավելագույն ծավալը՝ 110 էջ:
- Գլխավոր հատակագծի նախագիծը համաձայնեցման է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ տեքստը՝ Microsoft Office Word, գծագրերը՝ AutoCAD և PDF ծրագրերով:
- ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած նախագիծը կատարողի կողմից ներկայացվում է համապատասխան մարզպետին հաստատման՝ մեկական էլեկտրոնային և մեկական թղթային տարբերակներով,
- Հաստատված նախագիծը կատարողի կողմից հանձնվում է պատվիրատուին էլեկտրոնային կրիչներով՝ 15-ական օրինակ, թղթային՝ առնվազն հենակետային, հիմնական և գոտևորման գծագրերը մարզպետարանի և համայնքի համար մեկական օրինակի հաշվարկով: